ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2020 թվականի N: 326-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N: 306-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրք 172-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայ օգնության միության «Ախուրյանի մոր և մանկան առողջության կենտրոն» հիմնադրամի մանկաբարձ–գինեկոլոգ Լ.Մխիթարյանի կողմից տրված AF N 199455 անաշխատունակության թերթիկը և Հայկուհի Հովհաննիսյանի 2020 թվականի նոյեմբերի 17-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կառնուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկուհի Հովհաննիսյանին հղիության և ծննդաբերության արձակուրդ տրամադրելու և Դիանա Գալստյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կառնուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակելու մասին» N: 306-Ա որոշման 1-ին կետում «փետրվարի 17-ը» բառը և թիվը փոխարինել «մարտի 4-ը» բառով և թվով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է